

## Այս համարում

### Հայերեն բաժին

- 1- ԹՀԹ-ի 14-րդ ՊԺ-ի անդրանիկ նիստը.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք .....2
- 3- Լուրեր – Հայաստան.....5
- 4- Լուրեր – Մփյուռք.....8
- 5- Հարցազրույց.....9
- 6- Խոհեր .....10
- 7- Մշակույթ .....10

Մյունակների սղոթյան պատճարով  
 Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում  
 եւ Հայ հին գրականություն հոդվածների  
 շարունակությունը կտպագրվի հաջորդ համարում

### Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք .....1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2

#### Ճապիկի առաջին էջում՝

Խաչատուր Կեսարացի – Վանք, Նոր Ջուղա,

#### Ճապիկի վերջին էջում՝

Մանուկի համաժողով՝ ցուցահանդես, Թեհրան

Համար 148, Հունվար 2009թ.

No. 148, January 2009

ماهنامه لویس – شماره ۱۴۸ دی ماه ۱۳۸۷

## ԹՀԹ-ի 14-րդ Պատգամավորական Ժողովի անդրանիկ նիստ

Ավարտվեցին Թեհրանի Հայոց Թեմի բարձրագույն օրենսդիր մարմնի՝ 14-րդ շրջանի Պատգամավորական ժողովի ընտրությունները: Իրանահայ քաղաքական և հասարակական ուժերը կարող են իրենց վերլուծությունները ներկայացնեն այս շրջանի ընտրությունների մասին, որը կարող է դաս լինի բոլոր ուժերի համար ապագա հասարաքաղաքական աշխատանքների մեջ:


2008 թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ 14-րդ ՊԺ-ի անդրանիկ նիստը: Պատգամավորների ընդհանուր քանակը 58 է, այդ նիստից 8 պատգամավորներ բացակայում էին հարգելի պատժառնելով (5 քահանահայրեր արարողության և երեք պատգամավորներ երկրից դուրս գտնվելու պատժառով): Նիստի սկզբում ԹՀԹ-ի առաջնորդ Տ. Սեփուհ Արք. Սարգսյանը տեղումնական աղոթքով կատարեց նիստի պաշտոնական բացումը, որից հետո ընտրվեց ժամանակավոր դիվան՝ ամենաերիտասարդ ու ամենատարեց պատգամավորներից (Տիկ. Վուլգան և պրն. Արտուշը):

Ընտրվեցին երեք հոգի որպես քվեախույզ հանձնախմբի անդամ (1- Հրաչ Իսախանյան, 2- Արա Շահնազարյան և 3- Վազրիկ Հակոբյան):

Կատարվեց 14-րդ ՊԺ-ի մնայուն դիվանի ընտրությունը և ընտրվեցին հետևյալները՝ 1- Փնորգ Աբուլյան՝ 48 ձայնով առաջին ատենապետ, 2- Ռոբերտ Սարգսյան՝ 40 ձայնով երկրորդ ատենապետ, 3- Էմիլ Մնացականյան՝ 42 ձայնով առաջին ատենադպիր և 4- Շաքե Ավետյան՝ 41 ձայնով երկրորդ ատենադպիր:

Այնուհետև Սրբազան հայրը բոլորի անունից շնորհավորեց նորընտիր դիվանին և հրավիրեց ստանձնելու իրենց պարտականությունները:

Վերջում Սրբազան հայրը իր պատգամը ուղղեց նորընտիր պատգամավորներին: Նա անդրադարձավ հետևյալ հարցերին՝ Շնորհավորելով բոլոր պատգամավորներին իրենց ընտրության կապակցությամբ՝ ցանկացավ գործունյա շրջան: Նշեց, որ սփյուռքի իրականության կյանքում եկեղեցին միշտ ժողովրդի կողքին է եղել և մեր ազգային կյանքը հիմնված է մի շարք սկզբունքների վրա և ըստ դրանց է առաջ գնում: Թեհրանի մեր թեմը, անմասն լինելով մեր հայ ժողովրդից 65 տարի է, որ այդ սկզբունքներով է շարժվում, որոնք մեր կանոնագրությունը 26 տարվա կյանք ունի, բայց դա վերանայման կարիք ունի: Պատգամավորական ժողովի հիմնական առաքելությունը պետք է լինի այն, որ մեր գործնական մարմնին՝ Թեմական Խորհրդին, օգնի, որ սա իր աշխատանքները առաջ տանի: Այս աշխատանքը թափանցիկ աշխատանք է, Պատգամավորական ժողովը Խորհրդարան չէ: Սրբազան հայրը պատգամավորների ուշադրությանն հանձնեց մեր համայնքի շահերի հարցը և ասաց, որ մենք որպես կրոնական համայնք, պետք է մեր կրոնական և ազգային շահերը վեր դասենք անձնական շահերից, ոչ մի պատգամավոր չմտածի որ ինքը որպես փրկիչ է եկել: Այս շրջանի Թեմական Խորհրդի հիմնական աշխատանքների առանցքը մոր սերնդի հայեցի և քրիստոնեական դաստիարակության հարցերն են լինելու: Առողջ դաստիարակություն պետք է լինի և պետք է ստեղծվի պահանջատիրության ոգի: Մեր թեմը պետք է օժտվի եկամտաբեր կալվածներով: Մեր բոլոր կառույցները շաղկապված են իրար հետ, նրանք վերադասավորման կարիք ունեն և մեր կյանքը նաև վերադասավորման կարիք ունի: Մեր Պատգամավորական ժողովը կարող է հարթություն ստեղծել աշխատանքների համար և կարող է ինքը դժվարություններ ստեղծել կամ դժվարություններ ստեղծող լինի: Այս մասին օրենքը կամ կանոնագրությունը



ասում է իր խոսքը: Պատգամավորական ժողովում անհատական, անձնական կամ թաղային հարցեր լուծելու տեղ չէ: Ժամանակն է, որ հարցերը բարձր պատասխանատվությամբ լուծել և ծառայություն բերենք մեր ժողովրդին, որոնք Ձեզ ընտրել են: Վերջում Սրբազան հայրը ցանկացավ լավագույն հաջողություններ պատգամավորներին այս չորս տարվա աշխատանքների համար:

Սրբազան հոր պատգամից հետո նիստը քննարկեց հաջորդ նիստի ժամկետի հարցը և որոշվեց դիվանը, նկատի ունենալով տարբեր հարցեր, որոշի հաջորդ նիստի կամ նիստերի օրն ու ժամը:

## Իրանահայ Համայնք

### Մամուլի և լրատվական գործակալությունների 15-րդ միջազգային փառատոն-ցուցահանդես

2008թ. նոյեմբերի 26-ին Թեհրանի «Մուսալա»-ում մշակույթի նախարարի և պատկան այլ բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ կատարվեց մամուլի և լրատվական գործակալությունների փառատոն-ցուցահանդեսի բացումը: Նախարարը համառոտ համեմատությամբ (հեղափոխությունից առաջ և հետո) հայտարարեց, որ այժմ մամուլն ու լրատվական միջոցները թե քանակով և թե որակով բարձր նվաճումներ են ձեռք բերել, ներկայումս հրատարակվում են 150 օրաթերթ:

Ցուցահանդեսին մասնակցում էին 65 օրաթերթ և 14 գործակալություն տարբեր բովանդակություններով քաղաքական, հասարակական, գրական, գեղարվեստական, մանկապատենական և այլն, այնպես որ որևէ այցելու, ինչ ճաշակի էլ որ լիներ, անպայման կը գտներ իրեն հետաքրքրող որևէ մի օրաթերթ կամ պարբերական:

Օտար երկրների տաղավարների կողքին Հայաստանի տաղավարը աչքի էր ընկնում իր մեծ թվով այցելուներով, «Ազգ» և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթերը առաջին իսկ ժամերում սպառեցին իրենց օրինակներն ու գովազդային հուշատետրերը:

Ցուցահանդեսի պատասխանատուների կողմից առանձին տաղավար էր հատկացվել փոքրամասնությունների մամուլին, որտեղ գրադաշտականների և հրյաների կողքին ներկա էին իրանահայ համայնքի «Լույս», «Հույս», «Ապագա», «Հանդես» և «Արաքս» լրատվամիջոցների ներկայացուցիչները, Մասնավոր տաղավարով ներկա-յացել էր «Պայման» եռամսյա հանդեսը, բացակայում էր «Ալիք» օրաթերթը: Քաղաքական, հասարակական, գեղարվեստական, մարզական, կուսակցական և այլ ասպարեզներում հայտնի դեմքեր նույնպես այցելեցին տաղավարներ ու սիրով պատասխանեցին լրագրողների ու թղթակիցների հարցերին: Փառատոն ցուցահանդեսին ներկա եղան, երկրի պետական պաշտոնյաներ, նախարարներ, խորհրդարանի անդամներ, քաղաքական տարբեր կողմերի ներկայացուցիչներ, սիրված արվեստագետներ ու մարզիկներ մոտիկից շփվեցին ներկաների հետ: Փոքրամասնությունների տաղավար այցելեց մշակույթի փոխնախարար՝ պրն. Մոհսեն Փարվիզը, նախարարության համագումարների գերտեսուչ՝ պրն. Վասիին, կրոնական փոքրամասնությունների գրասենյակի պատասխանատու՝ պրն. Թաղավին, որոնք մեկ անգամ ևս մոտիկից ծանոթացան հայ մամուլի դժվարությունների հետ: Տաղավար այցելեց խորհրդարանի պատգամավոր, պրն. Ռոբերտ Բեգլարյանը, շատ ուրախացանք քանի որ «Ազգ» և «Հայաստանի հանրապետություն» թերթերի ներկայացուցիչներից հետո առաջին հայն էր, որին հանդիպեցինք,

իհարկե այնուհետև տեսանք նաև մի քանի հայերի, ու երբ իրենց պատասխանատուների հետ տաղավար այցելեցին «Մարի Մանուկյան» դպրոցի աղջիկները, այնքան էինք ուրախացել, որ չուշացրինք նրանց սրահի բարձրաստիճան բարի գալուստ մաղթելու: Ցուցահանդեսի սրահը օրվա ամբողջ ժամերին լեցուն էր այցելուներով, հատկապես աչքի էր ընկնում երիտասարդությունը, որը, թեկուզ ասենք, հենց ընդհանուր հետաքրքրասիրությունից դրդված էր ընտրել այդ փառատոնը, սակայն, վստահ, այդ մշակութային ցուցահանդեսը իր ջերմ ու հաճելի մթնոլորտով տեսակ-տեսակ թերթերով ու լրատվական գործակալություններով ու շարունակ ցրվող ուրախ երաժշտությամբ իր դրական ազդեցությունն էր թողնելու պատանի ու երիտասարդ այցելուների վրա: Երևի ամենից շատ ուրախ էին դպրոցների տարրական բաժնի երեխաները, որոնք թույլտվություն ստանալով իրենց պատասխանատուներից, բաժանվելով տարբեր խմբերի, ուրախ-ուրախ թռչկոտելով գլուխ էին խոթում ամեն մի անկյուն...հիացմունքով են նայում նրանց կենսունակությանը և ակամայից խորհում. ի՞նչն է խանգարում մեզ, որ մեր երեխաներն էլ մեր դպրոցներում ու միություններում տեղի ունեցող միջոցառումների կողքին, իրենց պատասխանատուների հետ միասին ներկա գտնվեն նման հանդեսներին, որով հնարավորություն կունենան ծանոթանալու թե միջազգային և թե Իրանի մշակույթի ու տեղեկատվության վերջին զարգացումների հետ, որը ինչքան էլ քիչ բայց վստահ իր դրական ազդեցությունը կթողնի մեր երեխաների թե մշակութային և թե հասարակական զարգացման գործընթացի վրա:

Ա. Աղաջանյան

### «Գրքի շաբաթ» համագումարի առիթով

2008 թ. նոյեմբերի 18-ին «Գրքի շաբաթ»ի առիթով տեղի ունեցավ սեմինար, որը կազմակերպվել էր մշակույթի նախարարության համագումարների գերատեսչության միջոցով, որպեսզի հնարավորություն ստեղծվի ուսումնասիրելու հրատարակչության, տպագրության և գրքի իրավճակը, հայ, ասորի, գրադաշտական և հրյա կրոնական փեքրամասնությունների «Գրքի և հրատարակչության դերը, հեղափոխական Իրանի անցյալ 30 տարվա ընթացքում»: Համագումարին մասնակցում էին Իրանի մշակույթի նախարարության փոխնախարարը՝ Դկտ. Մոհսեն Փարվիզը, պետական պատասխանատու դեմքեր, իրանահայ գործարարներ, ազգային-հասարակական գործիչներ և «Հույս» երկշաբաթաթերթի արտոմատեր Պրն. Լևոն Ահարոնյանը, մոզպետ Դկտ. Խորշիդյանը, պրն. Ալիփուրը, կրոնական փոքրամասնությունների այլ մտավորականներ և հասարակական գործիչներ: «Գրքի շաբաթ»-ը 16-րդ շրջանի զեկույցում՝ մշակույթի նախարարության համագումարների գերտեսչությունից պրն. Վասիին անդրադարձավ, որ Իրանի իսլամական հեղափոխության շնորհիվ արդարադատության և խոսքի ազատության համար հող է պատրաստվել, որը հիմք է ծառայել փոխհասկացողության, արտահայտության և մտքերի փոխանակման համար տարբեր շրջանակների՝ այդ թվում նաև կրոնական փոքրամասնությունների և Իրանի պետական ու կրոնական շրջանակների միջև, կրոնական փոքրամասնությունների մասնագետների և Իրանի մշակութային հասարակության հետ, որոնք երկրի գիտության մի մասի ստեղծողներն են ու հող են պատրաստում, որպեսզի հրատարակչության դժվարությունները վերանան և գրավոր մշակույթը տարածվի, թեև այս երևույթը ուշացումով է սկսվել: Սեմինարը ղեկավարում էր մշակույթի նախարարության

կրոնական փոքրամասնությունների գրասենյակի պատասխանատու՝ պրն. Թադավին: Պրն. Թադավին, համառոտ ներկայացնելով գրադաշտական համայնքի գործունեությունը, բեմ հրավիրեց դոկտ. Փարվիզ Ահուրային, որը ներկայացրեց «Ֆարվահար» պարբերաթերթը, որը հրատարակվում է երկու ամիսը մեկ՝ 3500 օրինակով և 900 օրինակը երկրից դուրս է առաքվում: Ունեն նաև «Ամորդար» շաբաթաթերթը և այս երեսուն տարվա ընթացքում շուրջ 90 հատոր գիրք են հրատարակել, որոշները 2-3 հատորով 1500 էջանոց: Այնուհետև, Թադավին ներկայացրեց «Նայիրի» հրատարակչության տնօրեն պրն. Սեպուհ Ամիրխանյանին, որը ընդարձակ ներկայացրեց 400 տարվա հայ համայնքի տպագրական աշխատանքը՝ սկսած 1638 թվականի Խաչատուր Կեսարացու առաջին տպարանից մինչև «Վերածնունդ», «Մողեռ», մինչև 1954թ., երբ հիմնվել է «Նայիրի» տպարանը: Հայ համայնքում անցյալ 30 տարվա ընթացքում հրատարակվել է շուրջ 100 գիրք, ամսաթերթ, օրացույց, դասագիրք, «Ալիք» օրաթերթը, նաև «Լույս», «Արաքս», «Հույս», «Ապագա», «Հանդես», «Պայման» պարբերաթերթերը, «Նայիրի» տարեգիրքը, նաև «Իրանի հիմնական օրենքը» Գառնիկ Բաղայանի թարգմանությամբ: Այս ընթացքում գրքեր են հրատարակվել Էդիկ Բաղդասարյանի, Անդրանիկ Խեչումյանի, Ազատ Մաթյանի և այլ անհատների միջոցով: Հարկ է նշել, պրն. Թադավին շեշտեց, որ տպագրված գրքերի 30 տոկոսը տպվել է 1979-ից առաջ, իսկ 70 տոկոսը տպվել է ընթացիկ 30 տարվա ընթացքում, որի մասին ուսումնասիրություն է կատարել Դոկտ. Էդիկ Բաղդասարյանը: Այնուհետև բեմ հրավիրվեց հրյա փոքրամասնության խորհրդի նախագահ պրն. Ֆարիադ ԱՖրամյանը, որն իր խոսքերում անդադարձավ «Շարուն» թերթին, որն իր ձևի և ոճի մեջ առաջին դարպասն է եղել մուտք գործելու դեպի հրատարակչություն, որից հետո հրատարակվել են «Թամուզ» և «Բինու» ամսաթերթերը պարսկերենով, նաև 40 օրինակ գիրք, որը թարգմանվել է նաև անգլերենով, կամուրջ հանդիսանալով Իրանի և միջազգային համրության միջև: Այնուհետև բեմ հրավիրվեց ասորի համայնքի խորհրդի ներկաընթացիչը, պրն. Ալբերտ Քուչուհին, որն ասաց, որ անցյալ հարյուր տարվա ընթացքում կրոնական փոքրամասնությունների մշակութային և հրատարակչական հովանավորներն են եղել երկրի և համայնքի կրոնական- հասարակական մարմինները: 1907-1911 թթ. ասորի համայնքի խորհուրդը աշխատանք է տարել, որպեսզի մայրենի լեզվով հրատարակություն ունենա: 1920թ-ին Պատրիարք Բարշամսանի հովանավորությամբ Ուրմիո Սալմաստ քաղաքի գյուղերում հիմնվում են 90 գյուղական դպրոցներ, որոնք նաև հրատարակչական աշխատանքներ էլ տարել են, այդ թվականից ասորի համայնքը կենտրոնանում է Թեհրանում, որոնք ընտրում են խորհրդարանի ներկայացուցիչներ, մշակութային, բարեգործական հաստատությունների մարմիններ, հրատարակվում են «Ռոշանայի» անունով պարբերական, 1945թթ. կյանքի է կոչվում «Ասորի համայնքի խորհուրդը», «Ասորի երիտասարդների կազմակերպությունը», 1950-ին լույս է տեսնում երկրորդ պարբերականը՝ «Այանդե ռոշանը» խորհրդարանի ներկայացուցչի միջոցով, «Գիլգամիշ» ամսաթերթը ասորի երիտասարդական կազմակերպության միջոցով: Ունեն «Քարխե» անունով տպագրական և հրատարակչական հիմնարկություն: «Հադիդիթ» և «Սեդայե Շարդ» եկեղեցական պարբերականները: Վերջում բեմ հրավիրվեցին դոկտ. Փարվիզին, դոկտ. Վասիին, դոկտ. Խորշիդյանը, էքո հիմնարկի նախագահ՝ դոկտ. Ռաջաբին և ուրիշներ, որոնք գնահատական հուշանվեր և վկայական նվիրեցին ներքոիշխան մտավորականների՝ ասորի համայնքից՝ Ալբերտ Քուչուհին և Հանիբալ Գևորգիին, հրյա համայնքից՝ Փարվիզ Մոհաբին և Սեփիդե Սաքերխու, գրադաշտական համայնքից՝ դոկտ. Խորշիդյան, Փարվիզ Ահուրայի, հայ համայնքից՝ Ազատ Մաթյան,

Գարուն Սարգսյան, Լիդա Բերբերյան, Վարանդ, Անդրանիկ Խեչումյան, Վահե Արմեն և դոկտ. Անդրանիկ Սիմոնյան:

Ս. Հանրադյան

**ԻՐԱՆԱՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԷ Է ԽՐԱՆՈՒՄԵՆԸ,  
ՈՐ ԳՆԱՆ ԸԱՅԱՍԱՆ, ԱՅՆ  
ՈՉ ԱՆՆ**



*Այն օրերին, երբ աշխատանքի բերումով գտնվում էի Իրանի Իսլամական Հանրապետությունում, տեղի հայկական համայնքը ընտրում էր համայնքի պատգամավորական խորհուրդ, եւ այս հարցազրույցը հենց այդ ընտրությունների, թեհրանահայությանը հուզող հարցերի շուրջն էր Իրան-Հայաստան բարե-կամություն ընկերության հասարակական եւ հաղորդ-դակցության հանձնախմբի նախագահ՝ դոկտոր ՌՈՒԲԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ հետ:*

- Իրանահայ համայնքի պատգամավորական ժողովի ընտրություններում ներկայացված է նաեւ ձեր թեկնածությունը. նախընտրական շրջանում ի՞նչ հարցեր էին առաջին հերթին հուզում տեղի հայությանը եւ ի՞նչ խնդիրների են նրանք բախվում:

- Հիմնական խնդիրը, որ մենք ունենք, արտագաղթն է, որը մեզանից կախված չէ, բայց պատգամավորական ժողովը, որպես համայնքի բարձրագույն մարմին, որից ընտրվում է նաեւ թեմական խորհուրդը՝ որպես գործադիր մարմին, նախատեսում է որոշ միջոցառումներ ձեռնարկել՝ նվազեցնելու կամ կանխելու համար արտագաղթը, որը վերջին տարիներին մեծ թափ է ստացել: Սակայն կան նաեւ դեպքեր, երբ մարդիկ վերադառնում են, դա առայժմ մեծ տոկոս չի կազմում:

Երկրորդը կրթական համակարգն է, դժբախտաբար արտագաղթի պատճառով երեխաների թիվը դպրոցներում այնքան է քչացել, որ անցյալ տարի 2 հայկական դպրոց փակվեց: Աշակերտության թվի նվազումը նկատելի է նաեւ մյուս դպրոցներում, ինչը մտահոգում է մեզ: Հաջորդ հարցը, որ մենք ունենք, կրթական մակարդակի խնդիրն է: Քանի որ այստեղ 2 տիպի դպրոցներ կան շահադիտական եւ ոչ շահադիտական: Ոչ շահադիտականի, այսինքն՝ պետականի, որը մեր հայկական դպրոցներին է մոտ, մակարդակը ցածր է: Եվ մենք ունենք ընտանիքների մի խավ, որոնք գերադասում են իրենց երեխաներին տալ շահադիտական, վճարովի՝ պարսկական դպրոցներ, որոնց մակարդակը ավելի բարձր է: Բարեբախտաբար մեր ընտանիքները ի վիճակի են վճարովի դպրոցներ տալ իրենց երեխաներին, սակայն մյուս կողմից էլ նրանք կտրվում են հայկական միջավայրից, ինչը ցավալի է: Մենք կիրառում ենք ուրբաթօրյա դպրոցների դրությունը, որտեղ կրոն, հայոց լեզու եւ հայոց պատմություն են սովորում եւ դա էլ ներառված է իրենց պետական քննությունների մեջ:

Հաջորդ հարցը համայնքի տնտեսական վիճակն է: Կալվածքների ճիշտ օգտագործման, որպեսզի չարաշահումներ չլինել: Այս կալվածքների մի մասի հասույթը, այսպիսի ծրագիր կա, ցանկանում ենք ներդնել Հայաստանի մեջ: Անցյալ պատգամավորական ժողովում որոշում է ընդունվել մոտ 500 հազար դոլար գումարի չափով

հող գնել Հայաստանում, շինարարություն կազմակերպել, բնակարաններ կառուցել, որպեսզի իրանահայությանը, հատկապես երիտասարդ զույգերին խրախուսենք, որ գնան Հայաստան, այլ ոչ ԱՄՆ: Ցանկանում ենք նաև մի արտադրություն ստեղծել, որպեսզի զբաղվածության հարցը լուծենք: Ստադրություն կա նաև այստեղ եւս բնակարանաշինության ծրագիր կազմակերպել, եւ զույգերին տրամադրել բնակարաններ հարմար գներով՝ որպես արտագաղթի դեմ պայքարի միջոց: Ստադրություն կա նաև այստեղ ծերանոցի, կամ ես կասեի, մեծապարտեզ հիմնելը, քանի որ մեծահասակները շատ են:

- *Դուք ասացիք, որ հող գնելու եւ բնակարանաշինություն սկսելու հետ կապված ծրագիր կա, իսկ Հայաստանի իշխանությունները տեղա՞ն են, նրանց կողմից ինչ-որ քայլեր, ընդառաջ քայլեր կատարվո՞ւմ են, թե՞ ոչ:*

- Հայաստանի իշխանությունների կողմից բարյացակամ մոտեցում է ցուցաբերվում, բայց այստեղ ավելի շուտ անհրաժեշտ է մասնագիտական մոտեցումը, որովհետեւ Հայաստանի իշխանությունները ավելի լավ գիտեն, թե որտեղ տարածք գնել, ինչ աշխատանքներ տանել, ներդրումները ինչ բնագավառներում կատարել, որպեսզի դա արդյունավետ լինի եւ մի քանի տարի հետո չփակվի: Մեր գործադիր մարմինը՝ թեմական խորհուրդը այդ ուղղությամբ աշխատանքներ է կատարում, եւ այս առումով մենք հույս ունենք համագործակցել ՀՀ սփյուռքի նախարարության հետ, որի հետ դեռ կապեր չեն հաստատվել, հուսով ենք, որ կապերի հաստատումից հետո այդ հարցերը ավելի կազմակերպված կլինեն: Միայն թե մենք այստեղ մի խնդիր ունենք, մտածում ենք, որ ինչքան մեր համայնքի անդամները տեղյակ լինեն, այնքան ավելի պահանջատեր կլինեն, Հայաստանը ավելի մեծ ուշադրություն կդարձնի, եւ սա չպետք է մի փոքր խավի սեփականությունը լինի, թեմական խորհրդից միշտ պահանջում ենք, որ նման աշխատանքները թափանցիկ լինեն:

- *Ինչ վերաբերում է Հայաստանի սփյուռքի նախարարության ստեղծմանը, արդյոք կարո՞ղ է ինչ-որ ձեւով նպաստել համայնքների գործունեությանը:*

- Վստահ կարծում եմ, որ կարող է նպաստել, եթե սփյուռքի նախարարությունը կարողանա համաձայնության գալ Իրանի իշխանությունների հետ եւ համոզի, որ դա միջամտություն չէ Իրանի ներքին գործերին, հստակ կարող է իր դրական ազդեցությունը գործել: Որովհետեւ համայնքը այն ամենը, ինչ Հայաստանից է գալիս, հանգիստ ընդունում է: Այդ իսկ պատճառով սփյուռքի նախարարությունը կկարողանա հավաքել եւ մոտեցնել համայնքները: Մենք Իրանում այդպիսի խնդիրներ չունենք, սակայն մյուս երկրներում շատ հայեր իրար չեն ճանաչում: Եթե սփյուռքի նախարարությունը ակտիվ լինի, ապա միջպետական հարցերը լուծելուց հետո կարող է անպայման նպաստել այն միասնականությանը, որը մի կազմակերպություն կամ կուսակցություն չի կարող կատարել:

- *Ի՞նչ կապերի մեջ է համայնքը Իրանի իշխանությունների հետ եւ նպաստո՞ւմ են նրանք համայնքի*

*գործունեությանը, հայապահպանությանը: Շփումներն ի՞նչ նակարդակի վրա են:*

- Մեր պաշտոնական հարաբերությունները կատարվում են թեմական խորհրդի միջոցով: Բացի դրանից, յուրաքանչյուր միություն կապեր ունի ներքին գործերի նախարարության հետ, քանի որ գործունեության արտոնությունը այնտեղից է ստանում կամ որեւիցե միջոցառում անցկացնելու թույլտվություն, ու ես չեմ հիշում մի դեպք, որ իշխանությունները մերժեն կրոնական կամ ազգային տոների միջոցառման անցկացումը: Եթե լինում է ինչ-որ դժվարություն, ապա դիմում ենք թեմական խորհրդին, որպես համայնքի գործադիր մարմին, կամ Իրանի խորհրդարանի հայազգի պատգամավորներին: Կարող եմ ասել մի դրական քայլի մասին. կյանքի է կոչվել Իրան-Հայաստան բարեկամության ընկերությունը, որի գործունեությանը մասնակցում են եւ հայեր, եւ պարսիկներ: Մարդիկ, որոնք իրենց ներդրումն են ունեցել այդ բարեկամության հաստատման մեջ, նախկին դեսպանները կամ բարերարներ, օրինակ՝ Լեւոն Ահարոնյանը, որն այդ ընկերության նախագահն է, եւ այլք:

- *Իսլամական հանրապետությունում քրիստոնեական համայնքի եւ Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը ինչպե՞ս է կազմակերպվում, կա՞ն ինչ-որ հակասություններ:*

- Իրանի իշխանությունները լրիվ ազատություն են տվել հայերին, որպես ազգային եւ կրոնական փոքրամասնության: Եվ մենք ազատ կերպով իրականացնում ենք բոլոր մեր ծրագրերը, եւ եթե ինչ-որ հարցերում պետության աջակցության կարիքն է լինում, մենք դիմում եւ այն ստանում ենք լիովին:

- *Ինձ հատկապես հետաքրքրում է եկեղեցու գործունեությունը:*

- Եկեղեցու գործունեությունը լիովին պաշտպանված է, որեւէ դժվարություն այս առումով չկա, երբեք արգելքներ չեն եղել, ընդհակառակը, միշտ նպաստել են: Օրինակ, կան հայաթափ շրջաններ, որտեղ ունենք չգործող եկեղեցիներ, եւ եթե դրա պահպանության հարցն է լինում, ապա պետությունը այդ եկեղեցիների պահպանումը եւ վերանորոգումը ստանձնում է:

- *Թեհրանում ներկայումս մամուլի մեծ միջազգային ցուցահանդես է տեղի ունենում, որտեղ ներկայացված է նաև թեհրանահայ մամուլը: Հայ համայնքը ունի իր թերթերը եւ պարբերականները: Համայնքային մամուլը ի՞նչ խնդիրներ ունի եւ ի՞նչ աջակցություն է ստանում իշխանություններից:*

- Իրանահայ մամուլը, առաջին հերթին, իհարկե, «Ալիքն» է, որն ամենահին եւ միակ օրաթերթն է, նրան կից կա նաև «Պայման» պարսկալեզու եռամսագիրը, ունենք նաև «Ապագա» եռամսագիրը, հայերեն-պարսկերեն, սա ավելի շուտ իրանագիտական եւ հայագիտական հարցերին է անդրադառնում: Բացի այդ, ունենք «Հույս» երկշաբաթաթերթը, «Լույս» ամսագիրը, «Արաքս» երկշաբաթաթերթը եւ «Հանդես» ամսագիրը: «Ալիքը» եւ «Պայմանը» հովանավորվում են կուսակցության (Սարդարյանը նկատի ունի ՀԶԴ-ին, որը իրանահայության մեջ գործող միակ ավանդական կուսակցությունն է: Ռանկավարներին շահի ժամանակ հալածել են ու փախցրել

երկրից) կողմից, որոնք օգտագործել են նաև համայնքային ռեսուրսները, ինչի դեմ մենք միշտ բողոքել ենք, որ համայնքային ռեսուրսները պետք է ծառայեն ոչ միայն կուսակցական, այլև բոլոր լրատվամիջոցների համար: Այս առումով պետք է իմ բողոքը հայտնեն, «Ալիք» օրաթերթի շենքը մոտ 9 տարի առաջ գնվել է 100 հազար դոլարով համայնքի բյուջեից, մինչև օրս այդ պարտքը չի վերադարձվել: Մենք այդ բողոքն էլ ունենք, եթե «Ալիքը» կուսակցական թերթ է, ապա պետք է իր պարտքը վերադարձնի, կամ պետք է թույլ տալ, որ այդ ռեսուրսներից օգտվեն նաև մյուսները: Պետք է մշտն, բոլոր թերթերը հովանավորներ ունեն, եթե թերթը հովանավոր չունենա, չի կարող աշխատել: Նույնիսկ «Ալիքը» հովանավորությամբ է լույս տեսնում, չնայած իր տպարանն ունի, հակառակ դեպքում չի կարող տպագրվել: Պետությունն արդեն 4 տարի փոքրամասնությունների հատուկ գումար է հատկացնում, իրանահայերին 500-600 հազար դոլար է տրամադրում եւ այդ գումարի 10%-ը պետք է հատկացվի մամուլին: Դժբախտաբար, քանի որ մեր թեմական խորհրդի մեծ մասը բաղկացած է հիմնականում կուսակցականներից կամ համակիրներից, ապա այդ գումարները օգտագործվում են միայն կուսակցական թերթերի համար, ինչը բողոքի ալիք բարձրացրեց, մենք էլ բողոքեցինք: Եվ, օրինակ, ամեն տարի միայն 50 հազարի «Ալիքին» են օգնում եւ 10 հազարի «Պայմանին»: Մենք ասացինք, որ լավ է, մենք դեմ չենք օգնելուն, սակայն պետք է բոլոր թերթերին օգնել: Հուսով ենք, այս պատգամավորական ժողովից, մեր սիրելի կուսակցականները մի այդպիսի խտրականություն չեն կիրառի, որովհետեւ դա մեր հեղինակությունն է գցում, ստիպված ենք լինում դիմել պետությանը, եւ վերջինս այդ անարդարությունը նկատի ունենալով, ստիպված այդ գումարը իր մոտ է պահում, որ ինքը ուղղակի հատկացում անի: Իսկ սա պատիվ չի բերում մեր համայնքին, ավելի լավ է՝ մենք մեր հարցերը կարողանանք լուծել եւ արդար ձեռով կարողանանք այդ նյութական բաժանումը կատարել: Հուսով ենք, այս տարվա նման բաժանումը մեր թեմական խորհուրդը արդար ձեռով կկատարի:

- Եվ վերջում ի՞նչ կցանկանաք ասել հայաստանյան մամուլի միջոցով:

- Կցանկանայինք, որ հայաստանյան մամուլը, երբ գալիս է Իրան համայնքը ներկայացնելու, ապա բոլորին ներկայացնի, ամբողջովին, այսինքն՝ չգա մի մասին ներկայացնի, մյուս մասին՝ ոչ: Սա բողոքի ալիք է բարձրացնում, հակահայաստանյան տրամադրություններ է ստեղծում համայնքում: ՀՀ-ը նախկինում նման թերություններ չատ է ունեցել, բազմաթիվ անգամներ բողոքել են, բայց դա տեղ չի հասել: Եթե գալիս են, մենք թեքանում 5-6 ակտիվ միություններ ունենք, լավ կլինի, որ բոլորին ներկայացնեն, բոլորի հետ հանդիպեն: Կամ եթե գալիս են պատգամավորական ժողով, ապա համայնքը ամբողջովին ներկայացնեն, որ դժգոհության տեղիք չտա:

**Հարցազրույցը վարեց ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԸ**

Հ. Գ. Ավելի ուշ մեզ հայտնի դարձավ, որ Ռ. Սարգսյանը ընտրվել է համայնքի պատգամավորական խորհրդի անդամ, ինչի կապակցությամբ խմբագրությունը նրան շնորհակալորում է:

**Հայաստան**

**ՇԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆ-2008-ՈՒՄ  
ԳՐԱՆՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հայտարարություն է տարածել, որ Հեռուստամարաթոն-2008-ն արձանագրեց 35 միլիոն 9156 ԱՄՆ դոլարի կատարված եւ խոստացված նվիրատվություններ՝ կրկնապատկելով նախորդ տարվա արդեն տպավորիչ ցուցանիշը: Հանգանակված գումարները հետեւյալն են՝ մշակված ԱՄՆ դոլարով. Լոս Անջելես - շուրջ 1 300 000, Լիբանան - շուրջ 200 000, Մոնրեալ - շուրջ 130 000, Արգենտինա - 100 000, Մեծ Բրիտանիա - 200 000, Հոլանդիա - 40 000, Ավստրալիա - 50 000, Նյու Յորք - 200 000, Ֆրանսիա - շուրջ 1 500 000, Գերմանիա - 85 000, Շվեյցարիա - շուրջ 33 000, Տորոնտո 250 000, Հունաստան եւ Կիպրոս - շուրջ 40 000: Ռուսաստանաբնակ հայազգի գործարար Սամվել Կարապետյանը հայտարարել է 15 միլիոն ԱՄՆ դոլար նվիրատվության մասին, որը կուղղվի Ստեփանակերտում հիվանդանոցի կառուցմանը: Այս տարի փոքր եւ միջին նվիրատվությունների զգալի աճ է գրանցվել: Հեռուստամարաթոն-2008-ի խոշոր նվիրատուներից են «Վիվասել ՄՏՍ»-ը, Միքայել Վարդանյանը, Սամվել Ալեքսանյանը, Էդուարդո Էռնեստյանը, Գագիկ Ադիբեկյանը, Վարուժան Գրիգորյանը, Գագիկ Չաքարյանը, Նորիկ Պետրոսյանը, Բարսեղ Բեգլարյանը, Արամ Քոչարյանը, Խաչիկ Մանուկյանը, Կարապետ Ալեքսանյանը եւ այլ նվիրատուներ: «Մենք կրկին ապացուցեցինք, որ մեր ազգը հզոր է, երբ համախմբվում է», ասում է հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար Արա Վարդանյանը:

**Հյուսիսային եւ Հարավային Ամերիկա  
կատարած այցերի արդյունքները**

«Ազգ» օրաթերթ 04.12.08 Նոյեմբերի 8-27-ը սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպումներ է ունեցել Հարավային եւ Հյուսիսային Ամերիկայի մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնյաների եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ նպատակ հետապնդելով ծանոթանալ գաղթօջախների խնդիրներին եւ նրանց ներկայացնել նորաստեղծ նախարարության ծրագրերը: Քսանթորյա այցի ընթացքում նախարարն ունեցել է ավելի քան 102 հանդիպում, 37 հրապարակային, 14 հեռուստատեսային եւ ռադիո ելույթներ: Այցի առավել կարեւոր իրադարձություններն ու ապագայի հրատապ խնդիրները նոյեմբերի 3-ին «Էրեբունի պլազա» հյուրանոցում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց նախարարը:

Այցի ընթացքում տիկին Հակոբյանն աշխատանքն ուղղորդել է 4 բեւեռով: Արգենտինայում մասնակցել է հայ կանանց միջազգային համաժողովին, հանդիպել է հայ համայնքի ներկայացուցիչների եւ պետական կազմակերպությունների ղեկավարների հետ, իսկ Լոս Անջելեսում մասնակցել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի արդեն ավանդական դարձած հեռուստամարաթոնին:

«Լատինական Ամերիկայի երկրների հայկական գաղութներն ավելի քան 100 տարվա պատմություն ունեն: Համաձայն վերջին արտագաղթի արդյունքների՝ այդ երկրներում հայեր շատ քիչ են հայտնվում: Գաղութը լուծարման վտանգի առաջ է կանգնած, որովհետեւ լեզուն կորցնելու խնդրից բացի, մեծ տոկոս են կազմում խառն ամուսնությունները», նկատեց Հրանուշ Հակոբյանը:

«Նախաձեռնելու ենք «Լատինական Ամերիկայի հայկական համայնքների օգնություն» ծրագիրը, որը ներառելու է հատկապես կրթության հիմնախնդիրները: Պետք է հատուկ ուսուցիչներ վերապատրաստենք, գործուղենք Լատինական

Ամերիկա, որպեսզի լրջորեն զբաղվեն հայապահպանության խնդիրներով: Կյանքի օրենք պետք է դարձնենք նաեւ հեռավար ուսուցումը՝ մայրենի լեզուն, գրականությունն ու եկեղեցու պատմությունը օվկիանոսից այն կողմ գտնվող մեր հայրենակիցներին ներկայացնելու համար», ասաց Զրանուշ Զակոբյանը:

Նոյեմբերի 18-27-ը Զրանուշ Զակոբյանը անցկացրել է Լոս Անջելես քաղաքում, որտեղ ունեցել է ավելի քան 50 հանդիպում՝ պարզելու, թե ինչ մակարդակի վրա է գտնվում գաղթօջախի կյանքն ու ինչպիսի ծրագրեր պետք է մշակել Կալիֆոռնիայի համայնքի եւ Զայաստանի ժողովրդի միջեւ բարեկամության ամրապնդման համար: Նախարարի վրա տպավորիչ ազդեցություն էր թողել հատկապես Մարի Մանուկյան դպրոցը, որն, ըստ Զակոբյանի, հայկական դպրոցի կավագույն օրինակ է:

Ըստ Զրանուշ Զակոբյանի, նորաստեղծ նախարարության ամենադժվար խնդիրը կադրերի համալրման գործընթացն է: «Կարելիորագույն խնդիր է նաեւ տեղեկատվության հարցը, որ փորձում ենք ստանալ բոլոր համայնքներից, որոնց թիվը հասնում է 120-ի: Արտաքին գործերի նախարարության միջոցով փորձում ենք տեղեկատվություն ստանալ, որպեսզի վերլուծություններ կատարենք ու համապատասխան ծրագրեր իրականացնենք»: Տեղեկատվության փոխանակման նպատակով նախարարությունը ստեղծել է 2 վարչություն՝ տեղեկատվության եւ հեռահաղորդակցության ու մամուլի եւ հասարակության հետ կապերի: Ամենաուշը մեկ ամսից տեղի կունենան նաեւ նախարարության պաշտոնական կայքէջի եւ էլեկտրոնային թերթի բացումը, որտեղ ընթերցողը տեղեկատվություն կստանա 6 լեզվով: Դեկտեմբերի 12-ին «Էրեբունի պլազա» հյուրանոցում տեղի կունենա «1946-1948 թթ. հայրենադարձությունը եւ առաջիկա խնդիրները Զայաստանում» միջազգային կոնֆերանսը, որին կմասնակցեն սփյուռքահայ մասնագետներ, գիտնականներ, հոգեբաններ եւ իրավաբաններ:

**Այս տարվա ինն ամիսներին Հայաստան է ժամանել 402 հազար 223 զբոսաշրջիկ**

ԵՐԵՎԱՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս տարվա ինն ամիսներին հանրապետություն են ժամանել 402 հազար 223 զբոսաշրջիկներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 370 հազար 731-ի դիմաց (հավելածի տեմպը կազմել է 8,5 տոկոս):

**Սփյուռքի նախարարությունը հեքիաթների ժողովածու է պատրաստում**

2009-ին լույս կտեսնի հեքիաթների ժողովածու արելեւահայերենով եւ արեւմտահայերենով: Այն հրատարակության է պատրաստել ԶԶ սփյուռքի նախարարությունը: «Տվյալ ժողովածուի հրատարակումը քննարկվում էր Գրողների միության ֆորումում: Մենք էլ այն մշակեցինք ի պատասխան ֆորումում հնչեցված հարցի», տեղեկացրեց սփյուռքի նախարար Զրանուշ Զակոբյանն ու ընդգծեց, որ նախարարությունը կրթական ու մշակութային ծրագրեր իրականացնելուց գատ նաեւ հայրենադարձությանն ուղղված աշխատանքներ է տանում:

**ՎԱՍՏԱՏՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ**

Խորհրդարանը 81 կողմ, 5 դեմ, 2 ձեռնպահ ձայներով ընդունեց «ՀՀ 2009 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը: 2009-ին եկամուտները ծրագրված են 905,4 մլրդ դրամի, ծախսերը՝ 945,4 մլրդ դրամի, դեֆիցիտը՝ 40 մլրդ դրամի չափով: Մինչ քվեարկությունը նախագծի վերաբերյալ տեսակետներ հայտնեցին «Օրինաց երկիր», «Բարգավաճ Զայաստան» եւ ՀՀԴ խորհրդարանական խմբակցությունների

ներկայացուցիչները՝ հայտարարելով, որ կողմ են քվեարկելու նախագծին: Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Տիգրան Սարգսյանը՝ նշելով, որ 2009 թվականը լինելու է բարդ տարի բոլորի համար: Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց նաեւ «ՀՀ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» եւ «Պատասխազույս մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերը: Փաթեթով նախատեսվում է 2009-ի հունվարի 1-ից կրկնակի ավելացնել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի եւ ՍԴ անդամի պաշտոնական դրույքաչափերը՝ դրանք համապատասխանաբար սահմանելով 680 եւ 600 հազար դրամ, ինչպես նաեւ առաջարկվում է ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանել յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով: Վերջիններիս աշխատավարձը եւս կրկնակի կավելանա՝ 220 հազարի փոխարեն դառնալով 440 հազար դրամ:

**Իսլամացած հայերի մասին դասախոսություն**

Դեկտեմբերի 3-ին Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում եւս ակադեմիայի արելեւագիտության ինստիտուտում «Ամստեված գանգված մը՝ իսլամացած հայերը» թեմայով դասախոսություններով հանդես եկավ Երվանդ Պարետ Մանոքը Փարիզից: Նա տարիներ շարունակ զբաղվում է հայ եւ թուրք ժողովուրդների փոխառնչությունների (դրական թե ժխտական) ուսումնասիրությամբ: Ճանաչողական բնույթի այս դասախոսությունների նպատակն է առավել բարձրացնել իրազեկությունը հանգամանքների բերումով մահմեդականացած հայորդիների խմբերի նկատմամբ:

**ՀՀ ԳԱԱ ՆՈՐԱՍՏԵՐԾ ԲԱԺՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵՑԻՆ 78 ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐ**

Մամլո հաղորդագրություն Գիտության մեջ ունեցած ներդրման եվ Զայաստանի գիտության զարգացմանը նպաստելու նպատակով սփյուռքահայ ճանաչված գիտնականներից 78-ը ընտրվեցին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ: Ընտրությունը տեղի ունեցավ սույն թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում:

Նորընտիր արտասահմանյան անդամների հետ տարվող աշխատանքը կհամակարգի ՀՀ ԳԱԱ նորաստեղծ սփյուռքահայ գիտնականների բաժինը, որի նպատակն է՝ աշխուժացնել Զայաստան-Սփյուռք կապերը, համախմբել հայկական Սփյուռքի գիտական ներուժը եվ նպաստել Զայաստանի Զանրապետության գիտական առաջընթացին:

Սփյուռքահայ գիտնականները կարող են հանդես գալ որպես փորձագետներ, հնարավորություն ընձեռել երիտասարդ մասնագետներին արտերկրում ծանոթանալու գիտական ժամանակակից ուղղություններին, մասնակցել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների աշխատանքներին, ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովներին ներկայացնել իրենց գիտական գործունեության արդյունքները:

**>>Զայագիտության § հասարակական գիտությունների բաժանմունք**

Ե.Ազատյան /ԱՄՆ, գրականություն/, Յու.Ապրեսյան /ՌԴ, լեզվաբանություն/, Վ.Գրիգորյան /ԱՄՆ, պատմություն/,

Ռ.ԳՏորգյան /Ֆրանսիա, պատմություն/, Գ.Թոսունյան /ՌԴ, իրավագիտություն/, Տ.Կոյունջյան /ԱՄՆ, հայագիտություն/, Ս.Յարությունյան /ՌԴ, ազգագրություն /, Ն.Յարությունյան /ՌԴ, լեզվաբանություն/, Յու. Յարությունյան /ՌԴ, սոցիոլոգիա/, Վ.Սյանսիկով /ՌԴ, չինագիտություն/, Ս.Պիտտորովսկի /ՌԴ, պատմություն/, Ս.Սիտարյան /ՌԴ, տնտեսագիտություն/, Ա.Տերյան /ԱՄՆ, բանասիրություն/, Գ.Ուլուխուջյան /Իտալիա, պատմություն § բանասիրություն/ :

**>>Քիմիական § երկրի մասին գիտությունների բաժանմունք**  
Վ.Ազատյան /ՌԴ, քիմիագիտություն/, Վ.Ապարյան /ԱՄՆ, ֆիզքիմիա/, Վ.Աղաբեկով /Բելուռուս, ֆիզքիմիա/, Գ.Ալեքսանյան /ՌԴ, քիմիագիտություն/, Գ.Գաբրիելյանց /ՌԴ, երկրաբանություն/, Ա.Խրիմյան /ԱՄՆ, օրգանական քիմիա/, Է.Կարախանով /ՌԴ, նալթաքիմիա/, Ա.Կոստանյան /ՌԴ, անօրգանական քիմիա/, Ս.Յանեսյան /ԱՄՆ, քիմիա/, Ռ.Մելքոնյան /ՌԴ, անօրգանական քիմիա/, Գ.Մելիքյան /ԱՄՆ, օրգանական քիմիա/, Ի.Պապիսով /ՌԴ, պոլիմերային քիմիա/, Վ.Պետրոսյան /ՌԴ, օրգանական քիմիա/, Պ.Սարգիսով /ՌԴ, սիլիկատների քիմիա/, Օ.Սարգիսով /ՌԴ, քիմիագիտություն/, Ս.Օրդանյան /ՌԴ, անօրգանական քիմիա/:

**>>Կենսաբանական գիտությունների բաժանմունք**  
Ռ.Ազիզյան /ՌԴ, ուռուցքաբանություն, պլաստիկ վիրաբուժություն/, Գ.Անդրանիկյան /Գերմանիա, կենսատեխնոլոգիա/, Ա.Դարզի /Մեծ Բրիտանիա, վիրաբուժություն, ուռուցքաբանություն/, Վ.Թուրքյան /ՌԴ, կենսաքիմիա, թունաբանություն/, Լ.Խաչիկյան /Ավստրալիա, մոլեկուլային կենսաբանություն, զենետիկա/, Ռ.Միրզոյան /ՌԴ, դեղաբանություն/, Ա.Սուրադյան /ԱՄՆ, բժկագիտություն, էնդոկրինոլոգիա/, Օ.Ներսեսյան /ԱՄՆ, վիրաբուժություն/, Ռ.Չալախյան /ՌԴ, բջջային բժշկագիտություն/, Դ.Պատուլին /Ֆրանսիա, մոլեկուլային § բջջային կենսաբանություն/, Ա.Պարսեդյան /ԱՄՆ, կենսաֆիզիկա/, Յ.Սարուխանյան /ՌԴ, մանկական վիրաբուժություն/, Լ.Սարյան /ԱՄՆ, կենսաքիմիա, էկոլոգիա/, Վ.Սաքանյան /Ֆրանսիա, մանրէաբանություն/, Ս.Սերեդնիցին /ՌԴ, նյարդահոգեբանական դեղաբանություն/:

**>>Ֆիզիկայի § աստղաֆիզիկայի բաժանմունք**  
Ա.Ապրահամյան /ԱՄՆ, փորձարարական միջուկային ֆիզիկա/, Ֆ.Ահարոնյանը /Գերմանիա, բարձր էներգիաների աստղաֆիզիկա/, Ս.Ավագյան /ՌԴ, իոնոսֆերայի ֆիզիկա/, Ա.Բաղդասարյան /ՌԴ, ակուստաէլեկտրոնիկա/, Խ.Բաղդասարով /ՌԴ, ծանր մետալուրգիա, ֆիզիկական քիմիա/, Լ.Բուզաճ /ՌԴ, կոնդենսացված վիճակի ֆիզիկա/, Ս.ԳՏորգյան /Շվեդիա, միկրոալիքային էլեկտրոնիկա/, Ս.Եսայան /ԱՄՆ, կիսահաղորդչային ֆիզիկա § օպտոէլեկտրոնիկա/, Ռ.Յամբարձումյան /ՌԴ, լազերային ֆիզիկա/, Մ.Ղազարյան /ՌԴ, լազերային միկրոսկոպիա/, Ջ.Մուրադյան /Ֆրանսիա, արձային մասնիկների համակարգի ֆիզիկա/, Վ.Պետրոսյան /ԱՄՆ, տեսական աստղաֆիզիկա/, Ռ. Սեյսյան /ՌԴ, միկրո/նանո/էլեկտրոնիկա/, Պ.Սուքիասյան /Ֆրանսիա, նանոտեխնոլոգիա, սինթրոտրոն ռադիացիոն փորձաքննություն/, Ս.Ֆով /Ֆրանսիա, հիդրոդինամիկային անկայունություն, ակուստիկա/:

**>>Մաթեմատիկական § տեխնիկական գիտությունների բաժանմունք**  
Ս.Ադյան /ՌԴ, մաթեմատիկա/, Ս.Այվազյան /ՌԴ, մաթեմատիկա/, Դ.Ապելիան /ԱՄՆ, տեխնիկական գիտություններ/, Բ.Բոգոսյան /ԱՄՆ, մաթեմատիկա/, Ի.Գյուսեթյան /Ֆրանսիա, կոմպյուտերային գիտություն/, Ե.Ջորյան /ԱՄՆ, կոմպյուտերային ինժեներիա/, Մ.Թունանյան /Իրան, մաթեմատիկա/, Վ.Կուկուջանով /ՌԴ, մեխանիկա/, Ա.Մելիքյան

/ՌԴ, մեխանիկա/, Լ. Միննետյան /ԱՄՆ, մեխանիկա/, Յ. Շահգոլյան / Շվեդիա, մաթեմատիկա/, Լ. Պետրոսյան /ՌԴ, կիրառական մաթեմատիկա/, Ա.Սեյրանյան /ՌԴ, մեխանիկա/, Մ.Սունբատյան /ՌԴ, մեխանիկա/, Ջ.Տիմուրյան /Կանադա, մաթեմատիկա/, Յ.Փանոսյան /ԱՄՆ, մեխանիկա/, Ս.Աղայան /ԱՄՆ, ինֆորմատիկա/ , Ս.Գրիգորյան / ՌԴ, մաթեմատիկա/:

**ԹՈՒՐՔ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԻ ՏԱԿ 1 ՕՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐԵԼ Է 2500 ՄԱՐԴ**

300 թուրք մտավորականների նախաձեռնությամբ սկսված ստորագրահավաքը, որի նպատակն է ներողություն խնդրել հայ ժողովրդից «1915-ի մեծ արհավիրքի համար», մեծ արձագանք է գտել թուրք հասարակության մեջ: Ըստ նախնական տվյալների միայն մեկ օրվա ընթացքում [www.ozurdiliyoruz.com](http://www.ozurdiliyoruz.com) կայքէջի միջոցով տարածված նամակի տակ ստորագրել է 2500-ից ավելի թուրք մտավորական:

**Ընդգծվել է Հայաստան-իրան հարաբերությունները ռազմավարական մակարդակի բարձրացնելու անհրաժեշտությունը**

ԵՐԵՎԱՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԶՅ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն այսօր ընդունել է ԻԻՀ անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի տեղակալ Ալի Բաղերիի գլխավորած պատվիրակությանը, որի եռօրյա այցը Արթուր Բաղդասարյանի՝ ԻԻՀ կատարած այցի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածությունների համատեքստում է: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ԶՅ ազգային անվտանգության խորհրդի մամուլի գրասենյակից, քննարկվել է Հայաստան-իրանի Իսլամական Հանրապետություն հարաբերությունների խորացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ, շեշտվել է այդ հարաբերությունները ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային հարաբերությունների համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունը: Կողմերը համակարծիք են եղել, որ երկու երկրները համագործակցության մեծ ներուժ ունեն: Քննարկվել են նաև Հայաստան-իրան երկաթգծի, նավթամուղի, երեւան-Բաթում ավտոմայրուղու կառուցմանը Թեհրանի մասնակցության խնդիրները: Կողմերն ընդգծել են Հայաստան-իրան հարաբերությունները ռազմավարական մակարդակի բարձրացնելու անհրաժեշտությունը: Ա. Բաղդասարյանը եւ Ա. Բաղերին կարելու է են ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար գործնական քայլերի իրականացումը եւ նշել, որ դրան կարող է մեծապես նպաստել Հայաստանի եւ Իրանի անվտանգության խորհուրդների միջեւ ձեւավորվող հատուկ կոմիտեն: Ա. Բաղդասարյանն իր իրանցի գործընկերոջը պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան. այցը տեղի կունենա 2009 թվականին:

**ՀՆԱԿՅԱՆ ԱՈՒԱՋՆՈՐԴԻ ԱՐԽԻՎԸ՝ ՄԻՋԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Միջիգանի համալսարանի հայկական Ուսումնասիրությունների ծրագրի եւ Հատուկ հավաքածուների բաժինները հոկտեմբերի 31-ին կազմակերպել են հատուկ միջոցառում, որի ընթացքում գրադարանից օգտվողների համար բացվել է

Հնչակյան կուսակցության առաջնորդներից՝ Համբարձում Արզումանյանի (1891-1909) արխիվը, որը որոշ ժամանակ առաջ համալսարանին էր նվիրել նրա թոռնուհին՝ Մարգարիտ Հարմնը, Արզումանյան ընտանիքի այլ անդամների հետ միասին:

Տեղեկացնելով այս մասին, ՍԴՀ կուսակցության կենտրոնական վարչության հաղորդագրությունը նշում է, որ 1200 էջ պարունակող արխիվը (մեծ մասը հայերեն, կուսակցության վերաբերյալ փաստաթղթեր եւ անձնական թղթակցություններ) դասակարգված է եւ պատրաստ ուսումնասիրությունների: Ընթանում է նաեւ թվայնացման գործընթացը:

Համբարձում Արզումանյանը ծնվել է պատմական Գանձակում: Քաղաքական գործունեությունը սկսել է Թավրիզում (Իրան), ապա անցել Ռուսաստան, Եվրոպա եւ Մ. Նահանգներ, որտեղ 1909-ին կնքել է իր մահկանացուն:

Հանդիսությունը ներկա են եղել համալսարանի 60 դասախոսներ, ուսանողներ եւ Կալիֆոռնիայից ու Փենսիլվանիայից հատուկ ժամանած Արզումանյանի թոռներն ու նրանց զավակները:

### ԱՎԱՐՏՎԵՑ ԲԱԶԱՐԱՆ-ԱՐԱՐԱՏ ԸԱՅ- ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԱՏԱՐԻ ԳԾԱՅԻՆ ԸՏՎԱԾԻ ԶԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Դեկտեմբերի 1-ին Արարատ քաղաքի մերձակայքում տեղի ունեցավ 186,3 կմ երկարությամբ՝ Քաջարան-Արարատ մայրուղային գազատարի գծային հատվածի շինարարությունն ավարտելուն նվիրված արարողությունը, հաղորդում է «Նոյյան տապանը»: Այն Իրան-Հայաստան գազատարի շարունակությունն է՝ Հայաստան բնական գազի մատակարարման ռեսուրսային բազան ընդլայնելու եւ տեխնոլոգիական երկրորդ մուտքային գիծ՝ ստեղծելու նպատակով: Քաջարան-Արարատ գազատարը կառուցվել է բարդ լեռնաերկրաբանական եւ եղանակային պայմաններում, ծովի մակերեսույթից 1500-3000 մ բարձրության վրա: Ավելի քան 130 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային ծրագրի իրականացմամբ Քաջարան-Արարատ գազատարի միջոցով Հայաստանի կենտրոնական շրջաններ է փոխադրվելու իրանական գազը, վճարումները գազի դիմաց կատարվելու են «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» սկզբունքով: Երեւանի ՋԷԿ-ի 230 ՄՎտ եւ Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի 480 ՄՎտ հզորություններով արտադրված էլեկտրաէներգիան պետք է ապահովի դրա պայմանագրային ծավալի առաքումն ԻԻՀ, իսկ «շահութաբեր» էլեկտրաէներգիայի իրացումը՝ գազի փոխադրման եւ ծրագրի ներդրումների վերադարձը: Արարողությանը ներկա էին նախագահ Սերժ Սարգսյանը, նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, «Գազպրոմ» ԲԲԸ վարչության նախագահ Ալեքսեյ Միլերը:

## ՄՓՅՈՒՈՔ

### Հայկական սփյուռքի մասին Ֆիլմի պատրաստումը կը սկսվի Ֆրանսիայից

«Ի սփյուռս աշխարհի» («Աշխարհը եւ մենք») պայմանական անունը կրող խաղարկային փաստավավերագրական ֆիլմաշարի նախագծի հեղինակ, պրոդյուսեր, «Ման Փիքչերս» ստուդիայի տնօրեն Մանվել Սարիբեկյանն ու ստեղծագործական խումբը նպատակ ունեն ստեղծելու «մի ինքնատիպ տեսահանրագիտարան աշխարհով մեկ սփռված հայկական սփյուռքի պատմության եւ ներկայի մասին»:

### Մեծ Բրիտանիայում այսօր ապրում է 18-20 հազար հայ

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության արդյունավետությունը պայմանավորված է հայկական համայնքների հետ համագործակցությամբ:

Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց ճարտարագետ եւ քարտեզագետ Ռուբեն Գալչյանը, սփյուռքի նախարարությունը կարող է օգտակար աշխատանք տանել. անհրաժեշտ է երկար ժամանակ ծրագրեր մշակելու, նաեւ սփյուռքահայ ղեկավարների հետ խորհրդակցելու համար, քանի որ նրանք ավելի լավ գիտեն իրենց համայնքների խնդիրներն ու հնարավորությունները:

Նախարարության առաքելություններից մեկը պետք է լինի հայ արվեստագետին, մտավորականին օժանդակելն ու աջակցելը, որպեսզի նա հայ մշակույթը ներկայացնի սփյուռքում, ինչպես նաեւ, սփյուռքի մտավորականներին, արվեստագետներին հայրենիք բերելով՝ հայաստանաբնակներին ներկայացնի սփյուռքում ստեղծված արժեքները:

Բնակվելով Մեծ Բրիտանիայում եւ ծանոթ լինելով այնտեղի հայ համայնքի առանձնահատկություններին՝ Ռուբեն Գալչյանը նշեց, որ ժամանակ է պետք, որ սփյուռքի նորաստեղծ նախարարությունը կարողանա ծանոթանալ համայնքի կառուցվածքին, խնդիրներին: Մեծ Բրիտանիայում այսօր ապրում է 18-20 հազար հայ, որոնցից 4-5 հազարը վերջին տարիներին Հայաստանից մեկնածներն են: Նրանցից 10 հազարը բնակվում է հիմնականում Լոնդոնում եւ նրա շրջակայքում, իսկ մնացածը՝ տարբեր քաղաքներում:

Ըստ Ռ. Գալչյանի՝ համայնքի փոքր լինելով է պայմանավորված նրանում հասարակական եւ այլ կազմակերպությունների սակավությունը: Ներկայումս համայնքում գործում են կիրակնօրյա դպրոցներ, որտեղ հայ երեխաներին հնարավորություն է տրվում սովորել հայոց լեզու, հայ գրականություն եւ պատմություն: Այդ դպրոցներ այցելում է 250-300 երեխա: Ըստ Ռ. Գալչյանի՝ դրանով ինչ-որ չափով լուծվում է հայապահպանության խնդիրը:

Նրա տեղեկացմամբ, կան նաեւ մարզական, մշակութային կազմակերպություններ. Հայկական ինստիտուտը զբաղվում է մշակութային ծեռնարկներով, դասախոսությունների, հանդիսությունների, համերգների կազմակերպմամբ, որով թե հային, թե օտարին ծանոթացնում են հայ մշակույթին:

Հայերի համար հիմնական հավաքատեղին եկեղեցին է: Նշենք, որ Ռ. Գալչյանը 1991-2000 թվականներին եղել է Մեծ Բրիտանիայում ՀՀ պատվո իյուպատոս: Այս տարի նոյեմբերին Հայաստանում գիտության զարգացմանը նպաստելու համար ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից նրան շնորհվել է պատվավոր դոկտորի կոչում:

Նա իր անմիջական մասնակցությունն է ունեցել 2000 թվականին ստեղծված «Հայաստանի բարեկամներ» բարեգործական կազմակերպությանը, որը Հայաստանում իրականացրել է 1 մլն արժողությամբ շուրջ 200 ծրագրեր, ինչպես նաեւ 1988 թվականի երկրաշարժից հետո հիմնադրված «Լյո Արմենիա» կազմակերպությանը, որը կատարել է 12 մլն դոլարի ներդրում, մասնավորապես՝ կառուցվել է Վանաձորի Սբ Նարեկ մանկական հիվանդանոցը:



**Շարքագրույց**

**Շարքագրույց Վրաստանի «Շայաստան» օրաթերթի գլխավոր խմբագիր Եւ Վրաստանի նախագահի խորհրդական Վահան Բայբուրդի հետ**



Համահայկական լրատվամիջոցների ղեկավարների համաժողովի ժամանակ մեր ներկայացուցիչը առիթը օգտագործելով հարցազրույց է ունեցել Վրաստանի Թիբիլիսի քաղաքի հայ համայնքի ղեկավարներից մեկի՝ Վրաստանում հրատարակվող «Շայաստան» օրաթերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի նախագահի խորհրդական Վահան Բայբուրդի հետ, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

**Հ.- Խորհրդային Միության փլուզումը ի՞նչպես ազդեց Ձեր թերթի ու Վրաստանի վրա:**

Պ.- Կապիտալիստական սիստեմը և տնտեսությունը մեզ համար լրիվ անծանոթ բան էր, այնպես որ մեր ամբողջ սիստեմը ընկավ մի ծովում, որի անունը կապիտալիզմ էր և շատերը այդ ծովում լողալ չգիտեին, մեր «Շայաստան» թերթն էլ հայտնվեց այդ վիճակում, մենք լողալ չիմանալով ընկանք այդ ծովը. կամ պետք է խեղդվեինք կամ էլ պետք է հարմարվեինք ու մի կերպ փրկեինք մեզ, որպեսզի չսուզվեինք: Դա մենք կարողացանք անել և մնացինք, սովորեցինք, բայց գիտե՞ք, որ թերթը թանկագին հաճույք է: Մեր թերթում չկա գովազդ, քանի որ մեր ընթերցողները վիրահայերն են և դրա կարիքը ցավոք սրտի չկա, այդ պատճառով դժվարություններ ունենք, բայց վրաստանի կառավարությունն օգնում է մեզ:

**Հ.- Ինչպիսիսն է այդ օգնությունը, արդյո՞ք տարեկան բոլոր թերթերին պետությունը բյուջե է հատկացնում:**

Պ.- Այո, վրաստանում ոչ մի պաշտոնաթերթ չկա, կուսակցական թերթեր էլ չկան: Մեզ մոտ արգելվում է, որ պետությունը թերթ ունենա: Վրաստանի պետությունը իր բյուջեից մեզ օգնում է, պետական բյուջեից Ֆինանսավորվում է 150 հայկական դպրոց, վրաստանի պետությունը հայերին հարցնում է՝ ուզումե՞ք ձեր մայրենի լեզուն սովորեք, չնոռանաք ձեր ավանդույթները և թերթերը, ասում ենք՝ այո, և այդպես Ֆինանսավորում է թե՛ դպրոցներին և թե՛ հայկական թատրոնին, հայկական ռադիոն և հեռուստատեսությանը: Պետական մանկավարժական համալսարանում կա հայկական բաժանմունք, պետությունը նաև դրան է Ֆինանսավորում: Այս ամենը անում է ոչ թե՛ համայնքը, այլ՝ պետությունը, այսինքն՝ պետությունը ինքն է օգնում, որ հայը չնոռանա, որ ինքը հայ է:

**Հ.- Հիմնականում հայերը վրաստանի ո՞ր քաղաքներում են բնակվում:**

Պ.- Ըստ քանակի Թբիլիսիում մոտավորապես 150.000 հայ, Ջավախքում, Ախարքալաքում և Նինոցմինդայում մոտավորապես 120.000 հայ:

**Հ.- Վրաստանում հայկական քանի միություններ ու դպրոցներ կան:**

Պ.- Դպրոցների քանակը 150 է: Վրաստանի օրենսդրությամբ՝ քանի մարդ կարող են հավաքվել, գնալ արդարադատության նախարարություն և միություն հիմնադրելու իրավունք ստանալ: Մեզ մոտ 100-ից ավել մարզամշակութային կենտրոններ կան միություններ կան: Բայց մեր գործող միությունների տարբերությունը արտասահմանում գործող մշակութային կազմակերպությունների հետ այն է, որ ցավոք սրտի այսօր Վրաստանում հայ մեծահարուստներ չկան և այդ առումով միությունները զրկված են Ֆինանսավորումից և օգնություններից:

**Հ.- Ի՞նչպես եք տեսնում Իրան-Վրաստան հարաբերությունները:**

Պ.- Վրաստանի հարաբերությունների իր հարևանների հետ, խոսքս Թուրքիայի և Իրանի մասին է, կարևոր է: Ինչ որ թուրքերը ժամանակին արել են Վրաստանի հետ՝ ավերումներ և այլն, ժամանակին պարսիկներն էլ են մի քանի անգամ զավթել վրաստանը: Խորհրդային Միության ժամանակ այսպես էին տարածում, որ պարսիկները մեր հերը անիծել են և այլն, բայց այսօր Վրաստանի ղեկավարությունը շատ ճիշտ քաղաքականություն է վարում, ասում է մոռանանք անցյալը բայց հիշենք: Չտեսնված հարաբերություններ է ստեղծում և Թուրքիայի և Իրանի հետ: Վրաստանը շատ սերտ հարաբերություններ ունի արևմուտքի և Ամերիկայի հետ, բայց դա չի խանգարում Վրաստանին ունենալ նաև շատ հավասարակշռված, նորմալ և բարեկամական լավ հարաբերություններ Իրանի հետ: Վրաստանում հատկապես հայերս ու վրացիները լավ գիտենք, որ ժամանակին հզոր և մեծ պատմություն ունեցող երկիր է եղել Պարսկաստանը, համաշխարհային քաղաքակրթության սյուներից մեկն է, թուրքերը այդպես չեն, նրանք որպես ազգ ձևավորվեցին 13-րդ դարում: Իրանի ժողովուրդը շատ հմուտ ժողովուրդ է, այդ առումով Վրաստանը ամեն ինչ անում է լավ բարեկամական հարաբերություններ ստեղծի Իրանի հետ:

**Հ.- Վրաստանը ինչպես է մոտենում տարածաշրջանում հարցերի լուծման գործում Իրանի դերակատարությանը, որովհետև երբեմն խոսվում է միայն Թուրքիայի և Ռուսաստանի դերերի մասին ու անտեսվում է Իրանը:**

Պ.- Իհարկե, Վրաստանը տեսնում է Իրանի դերը այդ տարածաշրջանում: Վրաստանը տեսնում է, որ Իրանը շատ լուրջ սուբյեկտ է տարածաշրջանում: Քանի որ Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունները շատ բարվոք չեն, խոսակցություններ կան, որ իբրև Վրաստանը գնում է միայն ու միայն Ամերիկայի քաղաքականության ուղղությամբ, իսկ նման մոտեցումը միայն Վրաստանի թշնամիներն են տարածում և իրականում դա այդպես չէ: Այո, մենք համարում ենք, որ Ամերիկան և արևմուտքը մեր երկրի ռազմավարական դաշնակիցներն են, այո, մենք չենք ժխտում դա, բայց չնայած այդ հիմնախնդիրներին՝ Վրաստանը ինքն է որոշում անկախ քաղաքականությունը և Իրանի հետ մեր հարաբերությունները շատ հեռանկարային են և այսօր էլ լավ մակարդակի վրա է գտնվում: Իրանի և ԱՄՆ-ի լուրջ տարածայնությունները չի կարող խանգարի լավ հարաբերությունների ստեղծման գործին:

*Շարքագրույցը վարեց դոկտ. Ռ.Սարգսյանը*

**Խոհեր**

**Մեր անցած ճամբան  
գ- Մասջեդ Սուլեյման**

*Թ. Ղարախանյան Միրակցի*

Սառը պատերազմի հետեւանքով, 1956 թվականի մի ամառային երեկնապահ, եկեղեցու դուրսը և ներսը լեցուն էր հայ տղամարդկանցով և ինչպես միշտ, բանվորների գավակներս ներկայ էին: Այն ժամանակ դեռ եկեղեցու շուրջը երկաթ ձողերով էր պատած եւ դեռ քարե պատ չէին սարքել, սիպիոր բան էր պատահում, բղավումներ, ճվճվոցներ, հիմարներ... դավաճաններ... դավաճաններ... հիմար եք... դավաճան եք... գռռուն էր՝ Նաջառ Մինաս Մինասի Քոնարքցին, եկեղեցուց դուրս էին վազում, ներս էին վազում, ոտքներն զարկում գետին, պատին, եկեղեցու պատերին, թողնք էլ Ղարթունհին սպանեմ՝ հոսքը գնում էր Ղարթունհին Լազարին որ եկեղեցու ներսում ժողով էր վարում, Նաֆտի ըներության մեջ նա <BARRAK OFFICE> Բարրակ Օֆֆիս-ի մեծն էր: Իր ֆիզիքական կազմվածքի համար ժողովուրդը իրեն մականուն էր տվել «Կուլուլակ Ղարթուն»: Սիպիոր շրխոցներ լսեցինք բարձրաբոյ նաջառ Մինասը վերջապես հարձակվեց «Կուլուլակ Ղարթունի» վրա և ջղայնորեն հարվածեց Ղարթունհին երեսին բայց մյուսները քաշքշեցին և ջուկ-ջկեցին և դադարեցրին: Եւ Նաջառ Մինասին քանի հոգի եկեղեցու ներսից դուրս բերին և ջանացան իրեն հանգստացնել: Սակայն Նաջառ Մինասը զայրացած ու խռով բղավում էր՝ «Մարթիք էս դավաճաններին միք հավատա ու էս անիծված թուղթը միք ստորագրի»: Պրն Մինասի շուրջը բռնած մարդիկ ջանանում էին նրան հանգստացնել, բայց նաջառ Մինասը թքելով ու մրելով իր սեվ ու սպիտակ մագերը ցլրված ու թափփած երեսին ու աչքերին դեռ գռռում էր. «... Նամարդներ, նամարդներ, դավաճաններ...» և դավաճան ասելով եկեղեցու բակից դուրս եկավ ու ձեռքերը թափ տալով, «Փոշոը Քուհի» ճանապարհը բռնեց և բլուրը պատվելով Քայլեց դեպի իրանց տուն: Մենք փոքրիկներս, զարմացած և հուզմունքով մեր ընկեր Մալուսի հոր վիճակից ազդված հազիվ էինք կարողանում մեր խառը ջղայնությունը և արտասուքները խեղտել, եւ եկեղեցու բակից դուրս վազելով, փողոցը անցա և «Նոմրե Չեհել»-ի գաղուլ Յոլսեփի տան կողքից մեր աստիճանները բարձրացա, հասա տուն և մորս գտա որ օտար դրացիների հետ շարան կանգնած Ջաղուլ Յոլսեփի տներին կպած վարձված տներից, որ բլուրի փեշին էին, վերեւից ցած եկեղեցու բակում հրիռոցներին էին նայում, մորս գտա ու մղկտացի որ «Մամ, մեզի Յայաստանից կտրում են...» և փոքրերս իմանալով թե չիմանալով լաց ու կոցով Նաջառ Մանասի համար, չիմացանք այդ օրը ինչպես մթնեց: Ժամանակներ անցավ երբ հասկացանք նաջառ Մինասի զայրուքը այն էր որ ՏԿՎԱԼԻՈՐԵՆ Պարսկաստանի եկեղացի Յայաստանից բաժանեցին: Նաջար Մինաս, Տիկին Սաթենիկ և իրենց զավակները ատանաբայթ Արտակ և Մալուս տղաների հետ Մասջեդ Սուլեյմանից Գաղթեցին Յայաստան և միացան իրենց մյուս երկու մեծ տղաներին, որոնք 1946-ին Չար Մահալ Քոնարք գյուղից գաղթողների հետ, նախորոք տիկին Սաթենիկի եղբոր ընտանիքի հետ գաղթել էին:

Այս ցավալի ժողովը, Պարսկաստանի Թեմը որը կալվածային հարստությամբ հայոց ամենահարուստ թեմն է, բաժանեց էջմիածնից և միացրեց Անթիլյասի թեմին և այսպես մեր աղի արցունքները մինչեւ թեմերի վերամիացում, մեր սրտին ծանրացած քարացած է: Այդ 1956 թվականն էր:

Անգլո-հրանական ընկերությունը ի գորու էր իր գործողների ապրելակերպը դասավորել Անգլիական դասակարգային ձևերով: Ուրեմն Մասջեդ Սուլեյմանում ապրուստի լրիվ միջոցները կարգավորված էր ինչպես էին ջուրը, գազը, կայծը, դպրոցները, մարզանքի տեղեր՝ «Ֆուքբալ, կրիկետ, թեմիս ...» առողջարանները և այլն, միայն ցածր խավի խղճալի վիճակն էր որ այդ լրիվ համակարգից դուրս էր թողնվել և այդ խավը ամենամեծ թիվն էր ներկայացնում ինչպես որ փաստորեն իմ հայրիկի բանվորական ռեջիստրացիայի համարն էր 188,794. գրե թե քաղաքի ժողովրդի ամենամեծ թիվը բանվորների ընտանիքներ էին: նաֆտային ընկերության խտրականությունները այս խավին հրեց դեպի Պարսկաստանի

ծախակողմյան բանվորական շարժմանը և որոշ հայ ձախակողմյաններ կան փամփուշտների զոհ գնացին կամ թողեցին Մասջեդ Սուլեյմանը, իրենց գաղափարի համար: Անձամբ կարող եմ վկայել մի ազնիվ մարդու մասին, որ այդ մեր պատանի տարիներին ինքը մեզանից շատ մեծ էր, բայց հաստատ կվկայեմ որ քնելուց առաջ անպայման «հայր,մեր» էր մրմնջում, ահա այտ անձը ինչպես կարող էր թե հավատացյալ ձախակողմ լիներ և թե քրիստոնյա հավատացյալ: Սիպիորային էին այդ տարիներին որոշ ձախակողմները: **Շար. 3**

**Մշակույթ**

**ԳԻՏԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2008թ. նոյեմբերի 12-ին ՀՀ Գրականության ինստիտուտի դահլիճում կայացավ գրականագետ-աշուղագետ, Հայ աշուղների միության նախագահ, Բանասիրական գիտությունների դոկտոր՝ Շավիղ Գրիգորյանի բանասիրությունը, ուր գրականագետը ներկայացրեց իր գիտա-բանասիրական, գրականագիտական մի քանի հայտնագործությունները: Խոսելով վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում հայ գրականության, մշակույթի և բանասիրության ասպարեզում տեղի ունեցած հույժ կարևոր տեղաշարժերի մասին նշեց, որ ստեղծվել են ինչպես գրականության, այնպես էլ մշակույթի վերաբերյալ ոչ միայն նոր, այլև նախորդներից էլ զգալիորեն զանազանվող արժեքավոր մենագրական ուսումնասիրություններ: Ասպարեզ են եկել ոչ միայն պատշաճ բառ ու բանով, այլև լուրջ ու շրջահայաց դատողությունների տեր թե՛ տարեց և թե՛ երիտասարդ ստեղծագործողներ, որոնք, ցավոք, մինչ օրս ոչ միայն չեն նկատվել, այլև չեն արժանացել պատշաճ ուշադրության:

Որպես մեր հոգևոր աշխարհի վիճահարույց հարց, գրականագետը ներկայացրեց հայկական ժողովրդական երգ համարված, իրականում էլ ոչ թե՛ «Կռունկ», այլ՝ «Կռունկներ», («Թուրմեներ») կոչված թուրքերեն երգը, որ ավելի քան մեկ դար է ինչ դարձել է և՛ վեճի և՛ խորհրդածությունների առարկա: Մանրագինն քննարկելով այս երգի հետ կապված բոլոր ակնարկներն ու ժամանակագրական մեկնությունները նա հավաստեց, որ ժողովրդական համարվող «Կռունկ» երգը 15-րդ դարում ապրած և ստեղծագործած ոչ թե՛ տաղասաց բանաստեղծի, այլ հայ ականավոր մի աշուղի՝ **ՂՈՒԼ ՕՂՒԻ ԵՐՁԼԱՅՈՒՐ**՝ «Արդյոք ո՞ր կողմերից թռած գալիս եք» սկզբածրվ երգն է, որն էլ ոչ միայն ուղղակիորեն աղերսվում է «Կռունկ»-ին, այլև հենց նույն երգն է: Սիպիորային այս մեկ տունը՝ Ղուլ Օղու «Կռունկ»-ից. **\*\*\***

Արդյոք ո՞ր կողմերից թռած գալիս եք,  
Սպասեք մի լուր հարցնեմ, կռունկներ,  
Իմ սիրելի յարից ի՞նչ գիտեք, ասեք,  
Խփոփանքի մի խոսք ասեմ, կռունկներ:

Այնուհետև անդրադառնալով **Նահապետ Քուչակին** աշուղագետը նշեց, որ նա ոչ թե բանաստեղծ կամ տաղասաց է, այլ՝ աշուղ, այն էլ բացառիկ՝ իր մեզ հասած հազիվ մեկ տասնյակից ավելի թուրքերեն այն երգերով, որ հայտնաբերել և մեզ էր պարզաբերել վաղուց արդեն կյանքից հեռացած պարսկահայ բանասեր Օհնի Եգանյանը: Սիպիորային մի քառյակ Քուչակի հրաշալի այդ երգերից մեկից՝ «Վաղ առավոտին» խորագրով Շավիղ Գրիգորյանի թարգմանությամբ:

*Լրագրեց՝ «Լույս»-ի աշխատակից Գայանե Արզաղյանը*  
Շար. 1

**Ցավակցական**  
«Լույս» ամսագրի խմբագրական կազմը, իր խորին ցավակցությունն է հայտնում, Հենրիկ Ազիզյանին և իր հարազատներին, իրենց կրած ծանր և անփոխարինելի կորստի **Լորեն Ազիզյանի** ցավալի մահվան առիթով: